

Ստորագրվել է 26.06.2004թ

Ուժի մեջ է մտել 29.12.2005թ.

Գործում է 01.01.2006թ .

ԿՈՆՎԵՆՅԻԱ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Կանադայի Կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Կանադայի Կառավարությունը, ցանկանալով զարգացնել երկու պետությունների միջև տնտեսական, գիտական, տեխնիկա կան և մշակութային հարաբերությունները և ցանկանալով կնքել եկա մուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիա, համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1

Ընդգրված անձինք

Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պե տություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2

Ընդգրկված հարկերը

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետության կողմից սահմանված՝ եկամուտների և գույքի հար կերի նկատմամբ՝ ան կախ դրանց գանձման ե դանակից:
2. Եկամուտների և գույքի հարկեր են համարվում ամբողջ եկամտի, ամբողջ գույքի կամ եկամտի կամ գույքի տարրերի նկատմամբ սահմանված բոլոր հարկերը՝ ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած եկամտի հավելաճի, ձեռնարկությունների վճարած աշխատավարձի ընդհանուր գումարի, ինչպես նաև գույքի արժեքի հավելաճի շահույթի հարկերը:
3. Կոնվենցիան կիրառվում է գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ , մասնավորապես՝
 - ա) Հայաստանի դեպքում՝
 - I) շահութահարկ,
 - II) եկամտահարկ,

III) գույքահարկ,

IV) հողի հարկ

(այսուհետ՝ հայկական հարկ),

բ) Կանադայի դեպքում՝ Եկամտահարկի մասին օրենքի համաձայն Կանադայի Կառավարության կողմից գանձվող եկամտի և գույքի հարկեր (այսուհետ՝ կանադական հարկ):

4. Կոնվենցիան կիրառվում է նաև նույնական կամ ըստ էության համանման ցանկացած հարկի համար, որը կսահմանվի Կոնվենցիայի ստորագրումից հետո՝ ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն:

Հոդված 3

Ընդհանուր սահմանումներ

1. Սույն Կոնվենցիայում, եթե ենթատեքստն այլ բան չի պահանջում՝

ա) “Պայմանավորվող պետություն” և “մյուս Պայմանավորվող պետություն” տերմինները, ենթատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Կանադա,

բ) “Հայաստան” տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն, իսկ աշխարհագրական իմաստով օգտագործվելիս նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության տարածքը, ներառյալ ներքին ջրերը, որոնց նկատմամբ, Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավագործությունը՝ համաձայն ներքին օրենսդրության և միջազգային իրավունքի

գ) “Կանադա” տերմինն աշխարհագրական իմաստով օգտագործվելիս նշանակում է՝ Կանադայի տարածքը, ներառյալ նրատարածքային ծովը և հողային տարածքից ու տարածքային ծովից վեր գտնվող օդային տարածությունը, ինչպես նաև բացառիկ տնտեսական գոտին և այդ գոտուց դուրս գտնվող մայրցամաքային ելուստը, որի նկատմամբ, միջազգային իրավունքի համաձայն, Կանադան իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները,

դ) “անձ” տերմինը ներառում է՝ անհատ, ընկերությունների միավորում, ընկերություն, ընկերակցություն և անձանց ցանկացած այլ միավորում,

ե) “ընկերություն” տերմինը նշանակում է՝ ցա կացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,

զ) “Պայմանավորվող պետության ձեռնարկություն” և “մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն” տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

է) “իրավասու մարմին” տերմինը նշանակում է.

I) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար և պետական եկամուտների նախարար կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ,

II) Կանադայի դեպքում՝ պետական եկամտի նախարար կամ նախարարի լիազոր ներկայացուցիչ,

ը) “քաղաքացի” տերմինը նշանակում է.

I) Պայմանավորվող պետության քաղաքացի հանդիսացող ցանկացած ֆիզիկական անձ,

II) ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ միավորում, որը Պայմանավորվող պետության գործող օրենսդրության հիման վրա ստացել է իր այդ կարգավիճակը, և

թ) “միջազգային փոխադրում” տերմինը նշանակում է՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող նավով կամ օդանավով ուղևորներ և գույք փոխադրելու ցանկացած ուղևորություն՝ բա ցա ռութ յաՄբ այն դեպքերի, երբ ուղևորության հիմնական նպատակը այլ Պայմանավորվող պետության սահմաններում գտնվող վայրերի միջև ուղևորների և բեռների փոխադրումն է:

2. Պայմանավորվող պետության կողմից Կոնվենցիան ցանկացած պահի կիրառելիս դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե ենթատեքստն այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որը նրան տվյալ պահին այդ պետության օրենսդրությամբ տրված է այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան. այդ պետության գործող հարկային օրենքներով սահմանված ցանկացած տերմինի նշանակությունը գերակայում է այդ պետության այլ օրենքներով տերմինին տրված նշանակության նկատմամբ:

Հոդված 4

Ռեզիդենտ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով “Պայմանավորվող պետության ռեզիդենտ” տերմինը նշանակում է՝

ա) ցանկացած անձ, որը, այդ պետության օրենսդրության համաձայն, այնտեղ ենթակա է հարկման իր հիմնադրման վայրի, մշտական բնակության վայրի, ղեկավարման վայրի կամ որևէ այլ համանման չափանիշի հիման վրա, սակայն այդ տերմինը չի ներառում որևէ անձի, որն այդ պետությունում ենթակա է հարկման միայն այդ պետության այլ միջոցներից ստացված եկամտի նկատմամբ, և

բ) այդ պետությունը կամ նրա քաղաքական կամ վարչատարածքային ստորաբաժանումը կամ

տեղական իշխանությունը կամ ցանկացած այդպիսի պետության ստորաբաժանման կամ տեղական

իշխանության ցանկացած գործակալություն կամ ծառայություն:

2. Երբ, 1-ին կետի դրույթներին համապատասխան, ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, ապա այդ ֆիզիկական անձի կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ.

ա) ֆիզիկական անձը համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որտեղ մշտապես բնակվում է, իսկ եթե նա մշտապես բնակվում է երկու պետություններում, ապա ֆիզիկական անձը համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերն առավել սերտ են (կեն սա կան շա հե ըի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն պետությունը, որտեղ գտնվում է ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը, կամ եթե ֆիզիկական անձը պետություններից ոչ մեկում չունի մշտական կացարան, ապա ֆիզիկական անձը համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որտեղ սովորաբար բնակվում է,

գ) եթե ֆիզիկական անձը սովորաբար բնակվում է երկու պետություններում, կամ նրանցից և ոչ մեկում սովորաբար չի բնակվում, ապա ֆիզիկական անձը համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որի քաղաքացին է հանդիսանում,

դ) եթե ֆիզիկական անձը հանդիսանում է երկու պետությունների քաղաքացի կամ չի հանդիսանում դրանցից ոչ մեկի քաղաքացի, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Երբ, 1-ին կետի դրույթներին համապատասխան, ընկերությունը հան դի սանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, ապա նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ.

ա) նա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որում ստեղծվել է,

բ) եթե նա հիմնված չէ պետություններից ոչ մեկում, ապա համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որտեղ գտնվում է նրա փաստացի ղեկավարման վայրը:

4. Երբ, 1-ին կետի դրույթներին համապատասխան, անձը, որն այլ է, քան ֆիզիկական անձը կամ ընկերությունը, հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փորձում են հար ցը լուծել փոխադարձ համաձայնությամբ և որոշել, թե Կոնվենցիան ինչպես պետք է կիրառել տվյալ անձի նկատմամբ: Նման համաձայնության բացակայության դեպքում այդ անձին իրավունք չի տրվում ազատվել Կոնվենցիայով նախատեսված հարկից կամ պահանջել հարկի նվազեցում:

Հոդված 5

Մշտական հաստատություն

1. Սույն Կոնվենցիայի շրջանակներում “մշտական հաստատություն” տերմինը նշա նակում է՝ ձեռնարկատիրական գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. “Մշտական հաստատություն” տերմինը ներառում է հատկապես՝

ա) ղեկավարման վայր,

բ) մասնաճյուղ,

գ) գրասենյակ,

դ) գործարան,

ե) արտադրամաս, և

զ) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների հետազոտման

և/կամ շահագործման ցանկացած այլ վայր:

3. “Մշտական հաստատություն” տերմինը ներառում է նաև՝

ա) շինարարական հրապարակ, կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիր կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեություն, եթե միայն այդ հրա պա րա կի, ծրագրի կամ գործունեության տևողությունը ավելին է, քան ինն ամիսը,

բ) ձեռնարկության կողմից ծառայությունների, ներառյալ խորհրդատվական ծառայությունների մատուցում այդ նպատակների համար վարձած ծառայողների կամ այլ անձնակազմի միջոցով, եթե այդ կարգի գործունեությունը (նույն կամ փոխկապակցված ծրագրերի համար) երկրի ներսում գերազանցում է ինն ամիսը կամ 12 ամսվա ընթացքում այդ ժամանակահատվածների հանրագումարը գերազանցում է ինն ամիսը:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ “մշտական հաս տա տու թյուն” տերմինը չի ներառում՝

ա) հարմարությունների օգտագործումը՝ բացառապես ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պահեստավորման կամ ցուցադրման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահ պանումը՝ բացառապես պահ ես տա վորման կամ ցուցադրման նպա տա կով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պահպանումը՝ բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակվելու նպատակով,

դ) գործունեության կայուն վայրի պահպանումը՝ բացառապես ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության կայուն վայրի պահպանումը՝ բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

զ) գործունեության կայուն վայրի պահպանումը՝ բացառապես “ա”-ից “ե” ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ այդ գործողությունների համակցության արդյունքում առաջացած մշտական գործունեության վայրը նախապատրաստական կամ օժանդակ բնույթ ունի:

5. Չնայած 1-ին և 2-ին կետերի դրույթներին՝ այն դեպքում, երբ անձը, որն այլ է, քան անկախ կարգավիճակ ունեցող գործակալը, որի նկատմամբ կիրառվում է 7-րդ կետը, գործում է մի Պայմանավորվող պետությունում մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության անունից, համարվում է, որ այդ ձեռնարկությունը առաջին Պայմանավորվող պետությունում ունի մշտական

հաստատություն՝ հաշվի առնելով ցանկացած գործունեություն, որն այդ անձն իրականացնում է այդ ձեռնարկության համար, եթե տվյալ անձը՝

ա) ունի և սովորաբար օգտագործում է այդ պետությունում տվյալ ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձի գործունեությունը սահմանափակվում է միայն 4-րդ կետում նշված դրույթներով, որն, իրակա նացվում է ձեռնարկատիրական գործունեության մշտական վայրի միջոցով. այդ կետի դրույթների համաձայն՝ այդ գործունեության կայուն վայրը չի համարվում մշտական հաստատություն, կամ

բ) չունի նման իրավասություն, սակայն սովորաբար առաջինը հիշատակված պետությունում պահում է ապրանքների կամ արտադրանքի պաշար, որտեղից ձեռնարկության անունից պարբերաբար առաքում է ապրանքներ կամ արտադրանք:

6. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ համարվում է, որ Պայմանավորվող պետության ապահովագրական ընկերությունը, բացառությամբ վերաապահովագրման դեպքերի, մյուս Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունի, եթե այն այդ մյուս պետության տարածքում ընդունում է ապահովագրական վճարներ կամ այնտեղ ապահովագրում է հնարավոր ռիսկերից այն անձի միջոցով, որն այլ է, քան անկախ կարգավիճակ ունեցող գործակալը, որի նկատմամբ կիրառվում է 7-րդ կետը:

7. Ձեռնարկությունը չի համարվում Պայմանավորվող պետությունում մշտական հաստատությունը ունեցող միայն այն պատճառով, որ այդ պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում միայն միջնորդի, ընդհանուր կոմիսիոն գործակալ կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

8. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը վե՛րա հսկում կամ վերահսկվում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից (մշտական հաստատության միջոցով) կամ այլ կերպ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս պետությունում, այդ ընկերությանը ինքնին չի դարձնում մյուսի մշտական հաստատություն:

Հոդված 6

Եկամուտ անշարժ գույքից

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացված եկամուտը (ներառյալ գյուղատնտեսական ստորաբաժանից կամ անտառային տնտեսությունից ստացված եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սույն Կոնվենցիայի նպատակների համար “անշարժ գույք” տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության համապատասխան հարկային օրենքով, որ տեղ գտնվում է խնդրո առարկա գույքը: Այդ տերմինը, բոլոր դեպքերում, ներառում է անշարժ գույքին

օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությու նում օգտագործվող անասունն ու սարքավորումները, այն իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերվող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի ուզուֆրուկտը և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխ հատուցման համար փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Նավերն ու օդանավերն անշարժ գույք չեն համարվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տրամադրելուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց և այդպիսի գույքի օտարումից ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստաց ված ե կամուտների նկատմամբ և անկախ անհատական ծառայություններ մատուցելու համար օգտագործված անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

Հոդված 7

Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ պետությունում, եթե այդ ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը վերը նշված ձևով իրականացնում է կամ իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն, ապա ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման մյուս պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է տվյալ պետությունում գտնվող մշտական հաստատությանը:

2. 3-րդ կետի դրույթներին համապատասխան՝ եթե Պայմանավորվող պետության ձեռ նար կությունը մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով այնտեղ իրականացնում է ձեռնար կատիրական գործունեություն, յու բաքանչյուր Պայմանավորվող պետությունում այդ մշտական հաստատությանը վերագրվում է այն շահույթը, որն այն կարող էր ստանալ նույն կամ համանման պայմաններում իրականացնելով նույն կամ համանման գործունեություն՝ լինելով ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և գործելով միանգամայն անկախ այն ձեռ նարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է մշ տա կան հաստատության նպատակների համար կրած ծախսերի նվազեցում, նե բառյա ւ կառավարչական և ընդ հանուր վարչական ծախսերը, անկախ նրանից՝ այդ ծա խս ե բը կատարվել են այն պետությունում, որ տեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե այլ վայրերում: Մակայն չի թույլատրվում նվա զեց նել մշտական հաստատության կողմից ձեռնարկության գլ խա վոր գրասենյակին կամ նրա այլ գրասենյակներին վճարված այն գումարները, եթե այդպիսիք կան, որոնք հանդես են գալիս (բացի փաստացի ծախսերի փոխհատուցումից) պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար՝ հոնորարների, ռոյալթիների, վարձավճարների կամ հա մա նման այլ վճա րումների տեսքով, մա տուց ված հատուկ ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարի տեսքով, կամ, բացառությամբ բանկային

ձեռնարկությունների, մշտական հաստատությանը տրամադրված փոխառության դիմաց վճարված տոկոսների տեսքով: Նմանապես, մշտական հաստատության շահույթը որոշելիս հաշվի չեն առնվում ձեռնարկության գլխավոր գրասենյակի կամ նրա այլ գրասենյակների կողմից մշտական հաստատությանը վճարված գումարները (բացի փաստացի ծախսերի փոխհատուցումից) պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար՝ հոնորարների, հեղինակային կամ սեփականության իրավունքից ստացված եկամտի տոկոսների, վարձավճարների կամ համանման այլ վճարումների տեսքով, մատուցված հատուկ ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարի տեսքով, կամ, բացառությամբ բանկային ձեռնարկությունների, մշտական հաստատությանը տրամադրված փոխառության դիմաց վճարված տոկոսների տեսքով:

4. Մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնումը հիմք չի հանդիսանում այդ մշտական հաստատությանը շահույթ վերագրելու համար:

5. Նախորդ կետերի նպատակների համար. մշտական հաստատությանը վերագրվող շահույթը յուրաքանչյուր տարի պետք է որոշվի միևնույն եղանակով, եթե հակառակի համար հիմնավոր և բավարար պատճառ չկա:

6. Եթե Պայմանավորվող պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վեժնային շահույթը որոշել ձեռնարկության ամբողջ շահույթն իր տարբեր ստորաբաժանումների միջև համամասնական բաշխման հիման վրա, ապա 2-րդ կետում ոչինչ չի արգելի այդ Պայմանավորվող պետությանը հարկման ենթակա շահույթը որոշել բաշխման ընդունված եղանակով. այնուամենայնիվ, ընդունված բաշխման եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում նշված սկզբունքներին:

7. Այն դեպքերում, երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնց մասին առանձին նշվում է սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8

Նավագնացություն և օդային տրանսպորտ

1. Միջազգային փոխադրումների ժամանակ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ պետությունում:

2. Չնայած 1-ին կետի և 7-րդ հոդվածին դրույթներին՝ նավի կամ օդանավի ուղևորությունից Պայմանավորվող պետության ձեռնարկության ստացած շահույթը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ուղևորության հիմնական նպատակը ուղևորների կամ բեռների փոխադրումն է այդ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև միավորմանը, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային գործունեություն ծավալող գործակալությունում մասնակցելուց առաջացած շահույթի նկատմամբ:

4. Սույն հոդվածի նպատակների համար ձեռնարկության կողմից “միջազգային փոխադրումներում նավերի և օդանավերի շահագործում” տերմինը ներառում է՝

ա) նավերի կամ օդանավերի վարձույթը կամ վարձակալությունը, և

բ) բեռնարկերի և դրանց հետ կապված սարքավորումների վարձա կալությունը այդ ձեռնարկության կողմից, եթե այդ վարձույթը կամ վարձակալությունը օժանդակում է միջազգային փոխադրումներում այդ ձեռնարկության կողմից նավերի կամ օդանավերի շահագործմանը:

Հոդված 9

Փոխկապված ձեռնարկություններ

1. Եթե՝

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակի կամ աուղղակի մասնակցություն ունի մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության ղեկավարման, վերահսկման կամ գույքի մեջ, կամ

բ) միննույն անձինք ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունեն Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության ղեկավարման, վերահսկման կամ գույքի մեջ, և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են նրանցից, որոնք կատեղծվեին երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը այդ պայմանների բացակայության դեպքում կհաշվեգրվեր նրանցից մեկին, բայց այդ պայմանների հետևանքով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:

2. Երբ Պայմանավորվող պետությունն այդ պետության ձեռնարկության շահույթի մեջ ներառում և համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որի առնչությամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկ ման այդ մյուս պետությունում, և այդ կերպ ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլինեք առաջինը հիշատակված պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին անկախ ձեռնարկություններին բնորոշ փոխհարաբերություններ, ապա այդ մյուս պետությունը կատարում է այդ շահույթի առնչությամբ այնտեղ գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Նման ճշգրտումը որոշելիս պատշաճ ուշադրություն կդարձվի սույն Կոնվենցիայի այլ դրույթներին, և Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններն անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն միմյանց հետ:

3. Պայմանավորվող պետությունը չի փոփոխի ձեռնարկության շահույթը 1-ին կետում հիշատակված հանգամանքներում՝ իր ներքին օրենսդրությամբ սահմանված ժամկետային սահմանափակումները

լրանալուց հետո և, ամեն դեպքում, այն տարվա ավարտից հինգ տարի հետո, որի ընթացքում շահույթը, որը կենթարկ վեր այդպիսի փոփոխության, կարող էր վերագրվել այդ ձեռնարկությանը, եթե չլինեին 1-ին կետում հիշատակված պայմանները:

4. 2-րդ և 3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում խաբեության, պարտավորությունները դիտավորյալ չկատարելու կամ դրանցից խուսափելու դեպքերում:

Հոդված 10

Շահաբաժիններ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն նման շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այդ պետության օրենքների համաձայն, բայց եթե շահաբաժին ստացող սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա նշված հարկը չպետք է գերազանցի՝

ա) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե շահույթ ստացող սեփականատերը ընկերություն է, որն ուղղակիորեն տնօրինում է վճարող ընկերության կապիտալի շահաբաժինների առնվազն 25 տոկոսը, և շահույթ ստացող սեփականատիրոջ կողմից ներդրված կապիտալը շահաբաժինների հայտարարագրման ժամանակ գերազանցում է 100,000 ԱՄՆ դոլարը (կամ Պայմանավորվող պետություններից որևէ մեկի արժույթով դրան համարժեք գումարը);

բ) մնացած բոլոր դեպքերում՝ շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը:

Սույն կետի դրույթները չեն տարածվում այն հարկերի վրա, որոնք ընկերությունը վճարում է շահաբաժիններից ստացվող շահույթի համար:

3. “Շահաբաժիններ” տերմինը սույն հոդվածի իմաստով նշա նա կում է՝ եկամուտ բաժնետոմսերից, “օգտագործման” բաժնետոմսերից կամ “օգ տա գործ ման” իրավունքներից, հան ք արդյունաբերության բաժնետոմսերից, հիմ նա դիրն է ըի բաժնետոմսերից կամ այլ՝ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք սովող իրավունքներից, ինչպես նաև այն եկամուտը, որը ենթակա է հարկման նույն կարգով, ինչ որ բաժնետոմսերից ստացվող շահույթը՝ համաձայն այն պետության օրենքի, որի ռեզիդենտ է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 2-րդ կետի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժիններից օգտվող սե փականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռ նար կատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և մասնակցությունը, որի դիմաց վճարվում են շահաբաժինները, փաստացիորեն կապված է այդ մշտական հաստատության կամ

հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, ըստ հանգամանքների, կիրառվում են սույն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

5. Երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը եկա մուտ կամ շահույթ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունում, այդ մյուս պետությունը չի կարող հարկման ենթարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ շահաբաժինները վճարվում են այդ մյուս պետության ռեզիդենտին, կամ եթե ներդրումը, որի նկատմամբ վճարվում են շահաբաժինները, փաստացիորեն կապված է այդ մյուս պետու թյու նում գտնվող մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ, ինչպես նաև, երբ այդ պետությունը չի կարող ոբաշխված շահույթի հարկ գանձել ընկերության չբաշխված շահույթի նկատմամբ, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

6. Սույն Կոնվենցիայում ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ խոչընդոտի Պայմանավորվող պետությանը հավելյալ հարկեր գանձելու ընկերության՝ այդ պետությունում գտնվող մշտական հաստատությանը վերագրվող եկամուտներից կամ անշարժ գույքի ոլորտում գործունեություն իրականացնող ընկերության կողմից այդ պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտներից՝ ի լրումն այն հարկի, որը կգանձվեր այդ պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության եկամուտներից՝ բացառությամբ, երբ այդ կերպ գանձվող ցանկացած լրացուցիչ հարկի չափը չի գերազանցում այն եկամուտների գումարի 5 տոկոսը, որոնք նախորդ հարկային տարիներում չեն ենթարկվել այդպիսի լրացուցիչ հարկման: Սույն դրույթի նպատակների համար “եկամուտներ” տերմինը նշանակում է՝ Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարմանը վերագրվող եկամուտն էր, որոնք կարող են հարկվել այդ պետության կողմից՝ համաձայն 6-րդ հոդվածի կամ 13-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների, ինչպես նաև այն շահույթը, ներառյալ ցանկացած եկամուտ, որը վերագրվում է Պայմանավորվող պետության մշտական հաստատությանը տվյալ տարում կամ նախորդ տա րիներում, դրանից հանած այդ պետությունում տվյալ շահույթից գանձման ենթակա բոլոր հարկերը՝ բացի սույն կետում հիշատակված լրա ցուցիչ հարկից:

Հոդված 11

Տոկոսներ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետու թյան ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Այնուամենայնիվ, նման տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են՝ այդ պետության օրենսդրության համաձայն, սակայն եթե շահույթ ստացող սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ կարգով գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը:

3. Անկախ 2-րդ կետի դրույթներից՝

ա) Պայմանավորվող պետությունում առաջացող և այդ պետությանը, դրա քաղաքական կամ վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի պարտավորությունների

վճարվող տոկոսները, որոնք վճարվում են այդ առնչությամբ, ենթակա են հարկման միայն մյուս պետությունում, եթե տոկոսներից շահույթ ստացող սեփականատերը հանդիսանում է այդ մյուս պետության ռեզիդենտ,

բ) Հայաստանում առաջացող և Կանադայի ռեզիդենտին վճարվող տոկոսները ենթակա են հարկման միայն Կանադայում, եթե դրանք վճարվում են Կանադայի արտահանումների զարգացման վարչության կամ համանման բնորոշ այլ կազմակերպության (Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կորոշեն, թե արդյոք տվյալ կազմակերպությունը Կանադայի արտահանումների զարգացման վարչությանը համանման կազմակերպություն է) կողմից տրվող, երաշխավորվող կամ ապահովվող փոխառության կամ տրամադրվող, երաշխավորվող կամ ապահովվող վարկի դիմաց, և

գ) Կանադայում առաջացող և Հայաստանի ռեզիդենտին վճարվող տոկոսները ենթակա են հարկման միայն Հայաստանում, եթե դրանք վճարվում են սույն Կոնվենցիայի ստորագրումից հետո Հայաստանում ստեղծված և Կանադայի արտահանումների զարգացման վարչությանը համանման որևէ կազմակերպության (Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կորոշեն, թե արդյոք տվյալ կազմակերպությունը Կանադայի արտահանումների զարգացման վարչությանը համանման կազմակերպություն է) կողմից տրվող, երաշխավորվող կամ ապահովվող փոխառության կամ տրամադրվող, երաշխավորվող կամ ապահովվող վարկի դիմաց:

4. “Տոկոսներ” տերմինը սույն հոդվածի իմաստով նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջից՝ անկախ հիպոթեքային ապահովումից և, մասնավորապես, եկա մուտ պետական պարտատոմսերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված հավելվածարներն ու հատուցումը, ինչպես նաև այն եկամուտը, որը ենթարկվում է միևնույն հարկային ընթացակարգերին, ինչ որ դրամական փոխառություններից ստացված եկամուտը՝ համաձայն այն պետության օրենքների, որտեղ առաջացել է եկամուտը: Մակայն “տոկոսներ” տերմինը չի ներառում 10-րդ հոդվածում նշված եկամուտները:

5. 2-րդ կետի դրույթներն չեն կիրառվում այն դեպքերում, երբ տոկոսներից շահույթ ստացող սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս պետությունում այնտեղ գտնվող մշտական ներկայացուցչության միջոցով, և պարտապահանջը, որի առնչությամբ վճարվում են տոկոսները, փաստացիորեն կապված է այդ մշտական հաստատության կամ կայուն ներկայացուցչության հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ կամ 14-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ պետության ռեզիդենտ է: Մակայն երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդ տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա համարվում է, որ այդ տոկոսները առաջացել են այն պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

7. Եոբ վճարողի և շահույթ ստացող սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հաստուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող վճարվող տոկոսների գումարը

գերազանցում է այն գումարը, որին նման հարաբերությունների բացակայության դեպքում կհամաձայնեին վճարողն ու շահույթ ստացող սեփականատերը, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա՝ յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան և պահպանելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

Հոդված 12

Ռոյալթի

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն նման ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է՝ համաձայն այդ պետության օրենսդրության: Սակայն եթե ռոյալթից շահույթ ստացող սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթի համախառն գումարի 10 տոկոսը:

3. “Ռոյալթի” տերմինը սույն հոդվածի իմաստով նշանակում է՝ հեղինակային իրավունքի, պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի կամ այլ ոչ նյութական գույքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի և հեղինակային իրավունքի կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար փոխհատուցման ձևով ստացած ցանկացած տեսակի վճարում և ներառում է շարժական ֆիլմերի և նկարահանման աշխատանքների, տեսաերիզների կամ հեռուստատեսության բնագավառում վերարտադրման այլ միջոցների համար կատարվող վճարումները:

4. 2-րդ կետի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթից շահույթ ստացող սեփականատերը, լինելով մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս պետությունում այնտեղ գտնվող կայուն ներկայացուցչության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց առնչությամբ վճարվում է ռոյալթին, գործնականորեն կապված են այդպիսի մշտական հաստատության կամ կայուն ներկայացուցչության հետ: Այդ դեպքում, կախված հանգամանքներից, կիրառվում են 7-րդ կամ 14-րդ հոդվածի դրույթները:

5. Համարվում է, որ ռոյալթին առաջացել է Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ պետության ռեզիդենտ է: Սակայն երբ ռոյալթի վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթի վճարման ծախսերը կրում է տվյալ մշտական

հաստատությունը կամ կայուն ներկայացուցչությունը, ապա համարվում է, որ այդ թոյալթին առաջացել է այն պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ կայուն ներկայացուցչությունը:

6. Եթե վճարողի և շահույթ ստացող սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող թոյալթիի գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և շահույթ ստացող սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը ենթակա է հարկման յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

Հոդված 13

Գույքի արժեքի հավելած

1. Մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օ տարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելածը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անհատական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող պետության ռեզիդենտի հաստատուն բազային առնչվող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելածի շահույթը, ներառյալ նման մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ նման մշտական ներկայացուցչության օտարումից առաջացած արժեքի հավելածի շահույթը, կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի և օդանավերի կամ նման նավերի կամ օդանավերի շահագործման ժամանակ օգտագործվող բեռնարկղերի և այլ շար ժա կան գույքի օտարումից Պայմանավորվող պետության ձեռնարկության ստացած արժեքի հավելածի շահույթը ենթակա է հարկման միան այդ պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից գույքի արժեքի հավելածի շահույթը, որն ստացվում է՝

ա) բաժնեմասերի օտարումից, որոնց արժեքը հիմնականում ստացվում է մյուս պետությունում գտնվող

անշարժ գույքից, կամ

բ) ընկերակցությունում կամ ընկերությունների միավորումում բաժնեմասի օտարումից, որի արժեքը ստացվում է հիմնականում մյուս պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ մյուս պետությունում: Սույն կետի իմաստով “անշարժ գույք” տերմինը ներառում է միայն այն գույքը, որը արձակալվում է ձեռնարկության, ընկերակցության կամ ընկերությունների միավորման կողմից՝ իրենց գործունեության իրականացման համար:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում հիշատակված գույքից տարբերվող ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճի շահույթը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է օտարող անձը:

6. 5-րդ կետի դրույթները չեն ազդում Պայմանավորվող պետության, նրա ներքին օրենսդրության համաձայն, մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող և գույքի օտարմանը անմիջապես նախորդող վեց տարվա ընթացքում ցանկացած ժամանակահատվածում առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձի կողմից որևէ գույքի օտարումից ստացված եկամուտը հարկելու իրավունքի վրա:

7. Երբ ֆիզիկական անձը, որը դադարում է լինել Պայմանավորվող պետության ռեզիդենտ և անմիջապես դրանից հետո դառնում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ապա համարվում է, որ այդ ֆիզիկական անձը առաջինը հիշատակված պետությունում գույք է օտարել և այդ հիմքով հարկվում է այդ պետությունում. ֆիզիկական անձը կարող է իր ընտրությամբ հարկվել մյուս պետությունում այնպես, ինչպես այն ֆիզիկական անձը, որն այդ պետության ռեզիդենտ դառնալուց անմիջապես առաջ վաճառել և հետ է գնել գույքը տվյալ պահին դրա իրական շուկայական արժեքին հավասար գումարով:

Հոդված 14

Անկախ անհատական ծառայություններ

1. Մասնագիտական ծառայություններից կամ համանման բնույթի այլ անկախ գործունեությունից Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձի ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ պետությունում, բացի այն դեպքերից, երբ նա մյուս Պայմանավորվող պետությունում իր գործունեությունն իրականացնելու համար պարբերաբար իր տրամադրության տակ ունի հաստատուն բազա:

Եթե ֆիզիկական անձն ունի կամ ուներ նման հաստատուն բազա, այդ ե կա մուտը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, սակայն միայն այն չափով, որը վերագրելի է այդ հաստատուն բազային:

2. “Մասնագիտական ծառայություններ” տերմինը նե րառում է, մասնավորապես, գիտական, գրական, արվեստի, կրթական կամ մանկավարժական անկախ գործունեություն, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարագետների, ճարտարապետների, ատամնաբույժների և հաշվապահների անկախ գործունեություն:

Հոդված 15

Կախյալ անհատական ծառայություններ

1. 16-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածների դրույթներին համապատասխան՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ պետությունում, եթե այդ վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե աշխատանքն իրականացվում է մյուս Պայմանավորվող պետությունում, ապա դրա դիմաց ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված պետությունում, եթե.

ա) դիտարկվող օրացուցային տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած 12-ամսյա ժամանակահատվածում վարձատրվողի՝ մյուս պետությունում գտնվելու օրերի հանրագումարը չի գերազանցում 183 օրը, և

բ) վարձատրությունը կատարվում է մյուս պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի հոգում մյուս պետությունում գործատուի ունեցած մշտական հաստատությունը կամ կայուն ներկայացուցչությունը:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության

կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավի կամ օդանավի վրա իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը կարող է հարկվել միայն այդ պետությունում, եթե վարձատրությունը չի ստացվում մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից:

Հոդված 16

Տնօրենների հոնարարներ

Մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի կամ ընկերության այլ համանման մարմնի անդամ՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

Հոդված 17

Արտիստներ և մարզիկներ

1. Չնայած 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից որպես մարզիկ կամ արվեստի գործիչ, ինչպես, օրինակ՝ թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստ կամ երաժիշտ, մյուս Պայմանավորվող պետությունում իրականացված անհատական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:
2. Եթե արվեստի գործչի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անհատական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի աշխատողին կամ մարզիկին, այլ մեկ այլ անձի, ապա այդ եկամուտը, չնայած սույն Կոնվենցիայի 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:
3. 2-րդ կետի դրույթները չեն կիրառվի, եթե հաստատվի, որ ոչ արվեստի գործիչը կամ մարզիկը, ոչ էլ նրանց հետ կապված անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն մասնակցում այդ կետում հիշատակված անձի շահույթում:
4. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ 1-ին կետում հիշատակված գործունեությունից արվեստի գործչի կամ մարզիկի կողմից ստացված եկամուտը ազատվում է հարկումից այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է այդպիսի գործունեությունը, եթե այն իրականացվում է Պայմանավորվող պետությունների Կառավարությունների միջև մարզական կամ մշակութային փոխանակման շրջանակներում և չի հետապնդում շահույթ ստանալու նպատակ:

Հոդված 18

Կենսաթոշակներ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող կենսաթոշակները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:
2. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող կենսաթոշակները կարող են հարկվել նաև այն պետությունում, որտեղ դրանք առաջացել են՝ այդ պետության օրենսդրության համաձայն: Սակայն այն կենսաթոշակների պարբերաբար վճարումների դեպքում, որոնք տարբերվում են Պայմանավորվող պետության սոցիալական ապահովագրության օրենսդրության համաձայն կատարվող վճարումներից, գանձվող հարկը չպետք է գերազանցի ներքոհիշյալներից նվազագույնը՝
ա) վճարման համախառն գումարի 15 տոկոսը, և

բ) այն հարկի գումարի առնչությամբ սահմանված դրույքաչափը, որը վճարումներ ստացողն այլ կերպ պետք է վճարեր տարվա համար՝ այդ տարվա ընթացքում ֆիզիկական անձի կողմից ստացված կենսաթոշակի պարբերաբար վճարումների համախառն գումարի համար, եթե ֆիզիկական անձը լիներ այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որտեղ կատարվում են վճարումները:

3. Անկախ սույն Կոնվենցիայում նշվածներից՝

ա) Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող պատերազմի կենսաթոշակներն ու նպաստները (ներառյալ այն կենսաթոշակներն ու նպաստները, որոնք վճարվում են պատերազմի վետերաններին կամ պատերազմի հետևանքով ստացած վերքերի և վնասվածքների դեպքում) այդ մյուս պետությունում պետք է ազատվեն հարկից այն չափով, որքանով դրանք կազատվեին հարկից, եթե ստացվեին առաջինը հիշատակված պետության ռեզիդենտի կողմից,

բ) Պայմանավորվող պետության սոցիալական ապահովագրության օրենսդրության համաձայն մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին տրվող վճարումները ենթակա են հարկման միայն առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում, և

գ) Պայմանավորվող պետությունում առաջացող այլմենտը և այլ համանման վճարումները, որոնք վճարվում են մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, որն այնտեղ ենթակա է հարկման դրանց առնչությամբ, պետք է հարկվեն միայն այդ մյուս պետությունում. սակայն հարկվող գումարը այդ մյուս պետությունում չպետք է գերազանցի այն գումարը, որը ենթակա կլիներ հարկման առաջինը հիշատակված պետությունում, եթե ստացողը լիներ դրա ռեզիդենտ:

Հոդված 19

Պետական ծառայություն

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական կամ վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմինների կողմից ֆիզիկական անձին՝ այդ պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանության մարմիններին մատուցած ծառայությունների դիմաց վճարված աշխատավարձը և համանման այլ վարձատրությունը, բացի կենսաթոշակից, ենթակա են հարկման միայն այդ մյուս պետությունում:

բ) Սակայն նման աշխատավարձը և համանման այլ վարձատրությունը ենթակա են հարկման միայն մյուս Պայ մանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ պետությունում, և այդ պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը.

կ) հանդիսանում է այդ պետության քաղաքացի, կամ

II) չի դարձել այդ պետության քաղաքացի բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում Պայմանավորվող պետության կամ քաղաքական կամ վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմինների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց վճարվող աշխատավարձի և համանման այլ վարձատրությունների նկատմամբ:

Հոդված 20

Ուսանողներ

Ուսանողը կամ ստաժորը, որոնք հանդիսանում են կամ Պայ մանավորվող պետություն ժամանելուց անմիջապես առաջ հանդիսացել են մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և որոնք գտնվում են առաջինը հիշատակված պետությունում բացառապես իրենց ուսման կամ մասնագիտացման նպատակով, այդ մյուս պետությունում չեն հարկվում իրենց ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացած վճարումների համար, եթե այդ վճարումներն առաջանում են այդ պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

Հոդված 21

Այլ եկամուտ

1. 2-րդ կետի դրույթներին համապատասխան՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդված ներում չհիշատակված եկամտի տարրերը, անկախ առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

2. Սակայն եթե Պայմանավորվող պետության ռեզիդենտը տվյալ եկամուտը ստանում է մյուս Պայմանավորվող պետության աղբյուրներից, այդ եկամուտը կարող է հարկվել նաև այն պետությունում, որտեղ առաջանում է՝ այդ պետության օրենսդրության համապատասխան: Եթե նման եկամուտը ստացվում է ընկերությունների միավորումից, որոնք այլ են, քան այն միավորումները, որոնցում կատարած ներդրումները ենթակա են նվազեցման, ապա նման ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի եկամտի համախառն գումարի 15 տոկոսը, եթե եկամուտը ենթակա է հարկման այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում շահույթ ստացող սեփականատերը:

Հոդված 22

Գույք

1. Անշարժ գույքի ձևով հանդես եկող գույքը, որը պատկանում է Պայմանավորվող պետության ռեզիդենտին և գտնվում է մյուս Պայմանավորվող պետությունում, կարող է հարկվել այդ մյուս պետությունում:
2. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անհատական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող պետության ռեզիդենտի կայուն ներկայացուցչությանը առնչվող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:
3. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերով և օդանավերով կամ այդպիսի նավերի կամ օդանավերի շահագործմանն առնչվող շարժական գույքով ներկայացված գույքը ենթակա է հարկման միայն այդ պետությունում:
4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի մյուս բոլոր տարրերը ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

Հոդված 23

Կրկնակի հարկման կանխումը

1. Հայաստանի դեպքում կրկնակի հարկումից խուսափումը կատարվում է հետևյալ կերպ.
 - ա) այն դեպքում, երբ Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել Կանադայում, ապա Հայաստանը թույլ է տալիս՝
 - i) այդ ռեզիդենտի եկամտի հարկի նվազեցում Կանադայում վճարված եկամտի հարկին հավասար գումարի չափով,
 - ii) այդ ռեզիդենտի գույքի հարկի նվազեցում Կանադայում վճարված գույքի հարկին հավասար գումարի չափով:
- Սակայն երկու դեպքում էլ նման նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման թույլատրումը հաշվարկված եկամտի հարկի կամ գույքի հարկի այն մասը, որը, կախված հանգամանքներից, վերագրվում է այն եկամտին կամ գույքին, որոնք կարող են հարկվել Կանադայում,

բ) հայկական հարկից՝ Հայաստանի տարածքից դուրս վճարված հարկի հաշվանցմանը վերաբերող՝ Հայաստանի գործող օրենսդրության դրույթներին և այդ դրույթների ընդհանուր սկզբունքների վրա չազդող, հետագա փոփոխություններին համապատասխան, եթե Կանադայի ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահաբաժիններ է վճարում ընկերությանը, որը հանդիսանում է Հայաստանի ռեզիդենտ, և որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում է առաջինը հիշատակված ընկերությունում քվերակության իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսը, ապա հաշվանցվող գումարը պետք է ներառի առաջինը հիշատակված ընկերության կողմից Կանադայում վճարման ենթակա հարկի գումարը՝ այն շահույթի առնչությամբ, որից վճարվում են շահաբաժինները, և

գ) եթե, սույն Կոնվենցիայի որևէ դրույթին համապատասխան, Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը Հայաստանում ազատվում են հարկումից, ապա Հայաստանը, այնուամենայնիվ, տվյալ ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի համար հարկի գումարը հաշվարկելիս կարող է հաշվի առնել ազատված եկամուտը կամ գույքի:

2. Կանադայի դեպքում կրկնակի հարկումից խուսափումը կատարվում է հետևյալ կերպ.

ա) Կանադայում վճարվող հարկից՝ Կանադայի տարածքից դուրս վճարված հարկի նվազեցմանը վերաբերող՝ Կանադայի գործող օրենսդրության դրույթներին և այդ դրույթների ընդհանուր սկզբունքների վրա չազդող, հետագա փոփոխություններին համապատասխան, և եթե Կանադայի օրենսդրությամբ ավելի մեծ նվազեցում կամ հաշվանցում նախատեսված չէ, ապա Հայաստանում առաջացող շահույթի կամ եկամտի համար Հայաստանում վճարման ենթակա հարկը պետք է նվազեցվի այդ շահույթի, եկամտի առնչությամբ վճարման ենթակա կանադական հարկից,

բ) կանադական հարկից՝ Կանադայի տարածքից դուրս վճարված հարկի հաշվանցմանը վերաբերող՝ Կանադայի գործող օրենսդրության դրույթներին և այդ դրույթների ընդհանուր սկզբունքների վրա չազդող,

հետագա փոփոխություններին համապատասխան, եթե Հայաստանի ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահաբաժիններ է վճարում ընկերությանը, որը հանդիսանում է Կանադայի ռեզիդենտ, և որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում է առաջինը հիշատակված ընկերությունում քվերակության իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսը, ապա հաշվանցվող գումարը պետք է ներառի առաջինը հիշատակված ընկերության կողմից Հայաստանում վճարման ենթակա հարկի գումարը՝ այն շահույթի առնչությամբ, որից վճարվում են շահաբաժինները, և

գ) եթե, սույն Կոնվենցիայի որևէ դրույթին համապատասխան, Կանադայի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը Կանադայում ազատվում է հարկումից, ապա Կանադան, այնուամենայնիվ, կարող է այլ եկամտի կամ գույքի համար հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկից ազատված եկամուտը կամ գույքը:

3. Սույն հոդվածի նպատակների համար Պայմանավորվող պետության ռեզիդենտի շահույթը կամ եկամուտը, որը, սույն Կոնվենցիայի համաձայն, կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, համարվում է առաջացած այդ մյուս պետության աղբյուրներից:

Անխտրականություն

1. Պայմանավորվող պետության քաղաքացիները մյուս Պայմանավորվող պետությունում չեն ենթարկվում այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց ենթարկվում կամ կարող են ենթարկվել մյուս պետության հպատակները միևնույն հանգամանքներում, մասնավորապես, ռեզիդենտության առնչությամբ:

2. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող՝ քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում չեն ենթարկվում այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց ենթարկվում կամ կարող են ենթարկվել տվյալ պետության ռեզիդենտները միևնույն հանգամանքներում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատությունը այդ մյուս պետությունում չպետք է ունենա ավելի նվազ հարկային արտոնություններ, քան համանման գործունեություն իրականացնող՝ այդ մյուս պետության ձեռնարկությունները:

4. Սույն հոդվածում ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, թե Պայմանավորվող պետությունը պարտավորում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին հարկման նպատակներով այնպիսի անձնական գեղջեր, նվազեցումներ և պակասեցումներ շնորհել, որոնք շնորհել է իր ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա:

5. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի 7-րդ կետի կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները, ռոյալթին և այլ վարձատրությունները տվյալ ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչ որ առաջինը հիշատակված պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես, Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին այդ ձեռնարկության հարկվող գույքի որոշման նպատակով ենթակա է նվազեցման նույն պայմաններով, ինչ որ պարտքը առաջինը հիշատակված պետության ռեզիդենտին:

6. 5-րդ կետի դրույթները չեն ազդում Պայմանավորվող պետության հարկային օրենքների որևէ դրույթի գործողության վրա, որոնք՝

ա) վերաբերում են տոկոսների նվազեցմանը, և որոնք ուժի մեջ են սույն Կոնվենցիայի ստորագրման օրվանից (ներառյալ այդ դրույթների հետագա փոփոխությունները, որոնք չեն ազդում դրանց ընդհանուր սկզբունքների վրա), կամ

բ) ընդունվել են Պայմանավորվող պետության կողմից սույն Կոնվենցիայի ստորագրման օրվանից հետո, և որոնք նախատեսված են՝ ապահովելու, որ այդ պետության ռեզիդենտ չհանդիսացող անձը, այդ պետության օրենսդրության համաձայն, չօգտվի ավելի բարենպաստ հարկային պայմաններից, քան այդ պետության ռեզիդենտները:

7. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում կամ կառավարվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, առաջինը հիշատակված պետությունում չեն ենթարկվի ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց ենթարկվում կամ կարող են ենթակվել առաջինը հիշատակված պետության այլ համանման ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, տնօրինվում կամ վերահսկվում է երրորդ պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից:

8. Սույն հոդվածում “հարկում” տերմինը նշանակում է՝ սույն Կոնվենցիայի կարգավորման առարկա հարկեր:

Հոդված 25

Փոխհամաձայնեցման ընթացակարգ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետությունն երից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման, նա կարող է, անկախ այդ պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից, այդ հարկման վերանայման պահանջով գրավոր դիմել այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում: Որպեսզի նման դիմումը ընդունվի, այն պետք է ներկայացվի սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երկու տարվա ընթացքում:

2. Եթե 1-ին կետում հիշատակված իրավասու մարմինը բողոքը համարում է արդարացի, և եթե ինքն ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա ձգտում է խնդիրը լուծել մյուս Պայմանավորվող

պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ցանկացած ձեռք բերված համաձայնություն իրականացվում է՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենքներում առկա որևէ ժամկետային սահմանափակումներից:

3. Պայմանավորվող պետությունը իր ներքին օրենսդրությամբ սահմանված ժամկետային սահմանափակումներից և, ամեն դեպքում, այն հարկային ժամանակաշրջանի ավարտից, որին վերագրվում է խնդրո առարկա եկամուտը, հինգ տարի հետո չպետք է բարձրացնի Պայմանավորվող պետություններից որևէ մեկի ռեզիդենտի հարկման մակարդակը՝ ներառելով եկամտի տարրեր, որոնք արդեն ենթարկվել են հարկման մյուս Պայմանավորվող պետությունում: Սույն կետը չի կիրառվում խաբեության, պարտավորությունները դիտավորյալ չկատարելու կամ դրանցից խուսափելու դեպքում:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ անորոշություն կվորձեն լուծել փոխադարձ համաձայնությամբ:

5. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են խորհրդակցել միմյանց հետ կրկնակի հարկումը բացառելու նպատակով այն դեպքերում, որոնք նախատեսված չեն Կոնվենցիայով, և ուղղակիորեն հաղորդակցվել միմյանց հետ՝ Կոնվենցիայի կիրառման նպատակների համար:

Հոդված 26

Տեղեկատվության փոխանակում

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կփոխանակեն այնպիսի տեղեկություն, որն անհրաժեշտ է սույն Կոնվենցիայի կամ Կոնվենցիայում ընգրկված հարկերի վերաբերյալ Պայմանավորվող պետությունների ներքին օրենքների դրույթների կիրառման համար, քանի դեռ դրանց համաձայն իրականացվող հարկումը չի հակասում սույն Կոնվենցիային: Տեղեկատվության փոխանակումը չի սահմանափակվում 1-ին հոդվածով: Պայմանավորվող պետության կողմից ստացված ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի այնպես, ինչպես այդ պետության ներքին օրենսդրության համաձայն ստացված տեղեկությունը, և կարող է տրամադրվել միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղվում են հարկերի հաշվարկմամբ կամ գանձմամբ կամ այդ պետությունում գանձվող հարկերի վերաբերյալ բողոքների քննարկմամբ: Այդ անձինք կամ մարմինները տեղեկությունները օգտագործում են միայն այդ նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունները բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ:

2. 1-ին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել այնպես, որ դրանք Պայմանավորվող պետությանը պարտավորեցնեն՝

ա) իրականացնել այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին կամ վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ,

բ) ներկայացնել տեղեկատվություն, որը հասանելի չէ այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ սովորական վարչական գործավարության ընթացքում,

գ) ներկայացնել տեղեկություն, որը կբացահայտի որևէ առևտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրային գործընթաց, կամ տեղեկատվություն, որի բացահայտումը հակասում է հանրային կարգին (ordre public):

3. Եթե, սույն հոդվածի համաձայն, Պայմանավորվող պետությունը պահանջում է տեղեկություններ, մյուս Պայմանավորվող պետությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ պահանջվող տեղեկությունները ստանալու համար, այնպես, ինչպես եթե հարցը վերաբերեր իր սեփական հարկմանը, նույնիսկ եթե այդ մյուս պետությունը տվյալ պահին այդպիսի տեղեկությունների կարիք չունի:

Պայմանավորվող պետության իրավասու մարմնի կողմից հատուկ պահանջի դեպ քում մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմինը պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ, սույն հոդվածի համաձայն, տեղեկությունները պահանջվող ձևով, ինչպիս, օրինակ, դատարանում տրված վկայությունները և չհրապարակված բնօրինակ փաստաթղթերի պատճենները (ներառյալ գրքերը, թղթերը, հայտարարությունները, հաշվետվությունները, հաշիվներն ու գրառումները), տրամադրելու համար՝ այն

չափով, ինչքանով որ այդ վկայություններն ու փաստաթղթերը կարող են ձեռք բերվել այդ մյուս պետության օրենքների և վարչական ընթացակարգի համաձայն՝ նրա սեփական հարկերի առնչությամբ:

Հոդված 27

Դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հաստատությունների անդամներ

1. Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հաստատությունների անդամների՝ միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված ֆիսկալ արտոնությունների վրա:

2. Անկախ 4-րդ հոդվածի դրույթներից՝ Պայմանավորվող պետությունում կամ երրորդ պետությունում գտնվող մյուս Պայմանավորվող պետության դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հիմնարկի կամ մշտական պատվիրակության անդամ հանդիսացող ֆիզիկական անձը սույն Կոնվենցիայի շրջանակներում համարվում է ուղարկող պետության ռեզիդենտ, եթե այդ ֆիզիկական անձը ուղարկող պետությունում ընդհանուր եկամտի վրա դրվող հարկի առնչությամբ ենթարկվում է այն նույն պարտավորություններին, ինչպիսիք նախատեսված են ուղարկող պետության ռեզիդենտների համար:

3. Կոնվենցիան չի կիրառվում միջազգային կազմակերպությունների, դրանց մարմինների կամ պաշտոնյաների և երրորդ պետության կամ պետությունների խմբի դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հիմնարկի կամ մշտական պատվիրակության անդամ հանդիսացող անձանց նկատմամբ, որոնք գտնվում են Պայմանավորվող պետությունում և Պայմանավորվող պետություններից ոչ մեկում ընդհանուր եկամտի հարկի առնչությամբ չեն ենթարկվում նույն պարտավորությունների, ինչպիսիք նախատեսված են իրենց ռեզիդենտների համար:

Հոդված 28

Այլ կանոններ

1. Սույն Կոնվենցիայի դրույթները չպետք է մեկնաբանվեն այնպես, թե որևէ կերպ սահմանափակում են Պայմանավորվող պետության օրենսդրությամբ տրամադրվող ազատումը, արտոնությունը, հաշվանցումը կամ այլ նվազեցումը այդ պետության կողմից գանձվող հարկը որոշելիս:

2. Կոնվենցիայում ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ խոչընդոտի Պայմանավորվող պետությանը հարկ գանձելուն այդ պետության ռեզիդենտի այն եկամուտներից, որոնք ստացվում են ընկերակցության, ընկերությունների միավորման կամ վերահսկվող օտարերկրյա ստորաբաժանումներում մասնակցություն ունենալուց:

3. Կոնվենցիան չի կիրառվում Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող որևէ ընկերության (ինչպես նաև այդպիսի ընկերությունից բաժնետիրոջ կողմից ստացվող եկամտի), ընկերությունների

միավորման կամ այլ միավորման նկատմամբ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահավետորեն տնօրինվում կամ վերահսկվում են այդ պետության ռեզիդենտ չհանդիսացող մեկ կամ մի քանի անձանց կողմից, եթե ընկերության, ընկերությունների միավորման կամ այլ միավորման եկամտից կամ գույքից գանձվող հարկի գումարը զգալիորեն ցածր է այն գումարից, որը կգանձվեր այդ պետության կողմից, եթե ընկերության գույքի բոլոր բաժնեմասերը կամ ընկերությունների միավորումում կամ այլ միավորումում ընդհանուր մասնակցությունը, կախված հանգամանքներից, շահավետ կերպով տնօրինվեին այդ պետության ռեզիդենտ հանդիսացող մեկ կամ մի քանի ֆիզիկական անձանց կողմից:

4. Ծառայությունների մատուցման գլխավոր համաձայնագրի XXII հոդվածի (Խորհրդակցություններ) 3-րդ կետի նպատակներով Պայմանավորվող պետությունները համաձայնում են, որ, անկախ այդ կետից, իրենց միջև ծագած ցանկացած վեճ, թե արդոք տվյալ խնդիրը մտնում է սույն Կոնվենցիայի շրջանակների մեջ, կարող է ներ կայացվել Ծառայությունների մատուցման խորհրդին, ինչպես պահանջվում է այդ կետով, միայն Պայ մանավորվող պետությունների համաձայնությամբ: Սույն կետի մեկնաբանության հետ կապված ցանկացած կասկած կլուծվի 25-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն կամ, այդ ընթացակարգով համաձայնության չգալու դեպքում, երկու Պայմանավորվող պետությունների միջև համաձայնեցված ցանկացած այլ ընթացակարգի միջոցով:

5. Երբ, սույն Կոնվենցիայի որևէ դրույթի համաձայն, որևէ եկամուտ Պայմանավորվող պետությունում ազատվում է հարկից, և մյուս Պայմանավորվող պետությունում գործող օրենքի համաձայն՝ անձը, այդ եկամտի հետ կապված, ենթակա է հարկման այն գումարի առնչությամբ, որն ուղարկվել կամ ստացվել է այդ մյուս Պայմանավորվող պետությունում, այլ ոչ թե դրա ամբողջ գումարի առնչությամբ, ապա Կոնվենցիայի համաձայն՝ առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում թույլատրվող նվազեցումը պետք է կիրառվի միայն եկամտի այն մասի նկատմամբ, որը հարկվել է մյուս Պայմանավորվող պետությունում:

Հոդված 29

Ուժի մեջ մտնելը

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում դիվանագիտական ծանուցագրերի փոխանակումից հետո, որոնք հաստատում են, որ ներպետական բոլոր իրավական ընթացակարգերը կատարվել են, և դրա դրույթները կիրառվում են՝

ա) Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո ոչ ռեզիդենտներին վճարված կամ հաշվանցված եկամուտների նկատմամբ՝ դրանց աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ,

բ) այլ հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող կամ ավարտվող հարկային տարի ներքին համար:

Հոդված 30

Գործողության դադարեցումը

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մնում անորոշ ժամկետով, սակայն Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց 5 տարի հետո սկսվող ցանկացած օրացուցային տարվա հունիսի 30-ին կամ հունիսի 30-ից առաջ կարող է մյուս Պայմանավորվող պետությանը դիվանագիտական ուղիներով ծանուցել դադարեցման մասին: Այդ դեպքում Կոնվենցիան դադարում է ուժի մեջ լինելուց՝

ա) այդ օրացուցային տարվա ավարտից հետո ոչ ռեզիդենտներին վճարված կամ հաշվանցված եկամուտների նկատմամբ՝ դրանց աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ, և

բ) այլ հարկերի առնչությամբ՝ օրացուցային տարվա ավարտից հետո սկսվող հարկային տարիների համար:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Երևան քաղաքում 2004 թվականի հունիսի ին, երկու բնօրինակով՝ հայերեն, անգլերեն և ֆրանսերեն, բոլոր տեքստերը հավասարազոր են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՆԱԴԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝

ԱՆՈՒՆԻՑ՝